Հավելված 2
Կամավոր բժշկական ապահովագրության
թիվ HI018072 պայմանագրի

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ «ԳԱՐԱՆՏ ՍՏԱՆԴԱՐՏ 6/1»

Բժշկական ապահովագրության ծառայությունները հատուցվում են հետևյալ դեպքերում՝

	1. Շտապ եվ անհետաձգելի բուժօգնություն
1.1	Շտապ բուժօգնության բոլոր տեսակներ
1.2	Շտապ բժշկական ռեպատրիացիա և բժշկական էվակուացիա
1.3	Բժիշկ-փորձագետի շուրջօրյա խորհրդատվություն:
	2.Արտահիվանդանոցային (ամբուլատոր) բուժօգնություն
2.1	Բժիշկ-մասնագետների խորհրդատվություններ
2.2	*Լաբորատոր ախտորոշում. հարկլինիկական, բիոքիմիական, մանրէաբանական, շիճուկաբանական, հորմոնալ, ցիտոլոգիական և իմունաբանական և այլն
2.3	*Գործիքային ախտորոշում. ռենտգենաբանական հետազոտություն, համակարգչային տոմոգրաֆիա, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա, ՈՒՁՀ, էնդոսկոպիկ և այլն
2.4	Ամբուլատոր պայմաններում բժշկական մանիպուլյացիաների իրականացում անհետաձգելի և պլանային դեպքերում
2.5	Հիվանդանոցային պայմաններ չպահանջող անհետաձգելի և պլանային թերապևտիկ հիվանդությունների բուժում
2.6	Անհետաձգելի և պլանային փոքր վիրահատություններ
2.7	Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների սալջարդ, վերքեր կամ դրանց համակցում) բուժում
2.8	Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում
2.9	Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում
2.10	Սուր թունավորումների թեթև ձևերի ամբուլատոր բուժում
2.11	Պատվաստումներ արտասահման մեկնելու համար
2.12	Նախատեսված ստանդարտ պատվաստումներ երեխաների համար
2.13	**Ամբուլատոր դեղորայք
2.14	Բժշկական պարագաներ՝ ներարկիչներ, երակային կաթիլային համակարգ, բինտ, բամբակ (ներհիվանդանոցային և արտահիվանդանոցային)
2.15	Բժշկական պարագաներ՝ անշարժացնող միջոցներ, ճողվածքի պլաստիկայի ցանց տարեկան մինչև 100,000 ՀՀ դրամ
2.16	Բժշկի տնային կանչ (Ապահովագրողի կողմից նշված ամբուլատոր բուժկենտրոնից)
2.17	Տնային պայմաններում անալիզների և այլ լաբորատոր գործիքային հետազոտությունների կազմակերպում
2.18	Բժշկական ցուցման դեպքում մաշկի, լորձաթաղանթների գոյացությունների հեռացում՝ խալեր, պոլիպներ, պապիլլոմաներ և այլն,

2.19 Վերականգնողական և ֆիզիոթերապևտիկ բուժում-Ապահավագրական ժամկետի ընթացքում 1 անգամ մինչև 10 սեանս:

Ծանոթագրություն

1. Հափուցման ենթակա են սուր, անհետաձգելի և պլանային դեպքերում ախտորոշման և բուժման ընթացքի վերահսկման նպատակով, միայն բժշկի հիմնավորված ցուցումով իրականացվող լաբորատոր և գործիքային հետազոտությունները՝

Ծանոթագրություն.

1. Փոխհատուցման ենթակա է ամբուլատոր բուժման համար անհրաժեշտ այն դեղորայքի արժեքը, որը նշանակվել է՝

- սուր հիվանդությունների և անհետաձգելի վիճակների բուժման համար,

- լրացուցիչ կարգով՝ քրոնիկական հիվանդությունների սրացման ամբուլատոր բուժման համար,

2.Քրոնիկական հիվանդությունների ամբուլատոր բուժման համար նշանակված դեղորայքի արժեքը փոխհատուցման ենթակա չէ:

	3. Ներհիվանդանոցային (ստացիոնար) բուժում
3.1	Անհետաձգելի թերապևտիկ հիվանդությունների բուժում հիվանդանոցային պայմաններում
3.2	Վիրահատական և կոնսերվատիվ բուժում
3.3	Լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտություններ
3.4	Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում
3.5	Տարբեր տեսակի վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) բուժում
3.6	Սուր ներքին և արտաքին արյունահոսությունների բուժում
3.7	Այրվածքների, ցրտահարությունների, էլեկտրահարությունների բուժում
3.8	Սուր թունավորումների բուժում
3.9	Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում
3.10	Վնասվածքների վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաներ
3.11	Քթի միջնապատի դեֆորմացիայի, դրա բարդությունների վիրահատական բուժում,
3.12	Հիվանդասենյակի արժեքի հատուցում մինչև 50,000 ՀՀ դրամ:
	4.Ակնաբուժություն
4.1	Տեսողության սրության որոշում
4.2	Ռեֆրակտոմետրիա
4.3	Թերապիա
4.4	Վիրաբուժություն, ներառյալ գլաուկոմայի, կատարակտի և կերատոկոնուսի վիրաբուժություն:
	5.Ստոմատոլոգիա
5.1	Ստոմատոլոգիական նախազննում չի իրականացվում: Ստոմատոլոգիական ծածկույթը գործում է համաձայն ստորև նշված ստոմատոլոգիական ծառայությունների սահմանաչափերի՝ մինչև 50,000 ՀՀ դրամ: Պայմանագրի գործողության ընթացքում յուրաքանչյուր անձի համար,
5.2	Ախտորոշում
5.3	Ատամնաբուժական թերապիա
5.4	Ատամնաբուժական վիրաբուժություն
5.5	Ատամնանստվածքների հեռացում, փայլեցում մեկ անգամ
5.6	Ռենտգեն
	6.Հղիություն եվ ծննդօգնություն

6.1 Պետ.պատվերի շրջանակներից դուրս բնականոն և ախտաբանական հղիության վարման ծախսերի հատուցում մինչև 60,000 ՀՀ դրամ:

6.2 Պետ.պատվերի շրջանակներից դուրս ծննդօգնության (այդ թվում կեսարյան հատում) ծախսերի հատուցում մինչև 90,000 ՀՀ դրամ:

7.Օնկոլոգիա

7.1 Չարորակ նորագոյացությունների վիրաբուժություն

7.2 Չարորակ նորագոյացությունների ոչ վիրաբուժական բուժում (քիմիոթերապիա և ճառագայթային բուժում) մինչև 2, 500,000 ՀՀ դրամ:

8.Սրտաբանություն

8.1 Սրտանոթային վիրաբուժություն (բաց եղանակով)

8.2 Սրտանոթային վիրաբուժություն (փակ՝ ներանոթային եղանակով)

8.3 Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով

8.4 Աորտայի պրոթեզավորում (հատուցվում են բացառապես աորտայի անևրիզմայի շերտազատման անհետաձգելի վիրահատությունները)

8.5 Սրտի ռիթմի խանգարումը բացահայտող, կարգավորող միջոցառումներ (էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություններ, էլեկտրոաբլյացիա և այլն),

8.6 Սրտի փականների պլաստիկա, պրոթեզավորում անհետաձգելի և պլանային դեպքերում:

9.Քրոնիկ հիվանդություններ

9.1 Քրոնիկ հիվանդությունների սրացումների բուժում

9.2 Վիրահատական միջամտություններ, որոնք հանգեցնում են հիվանդության կամ վիճակի լիարժեք ապաքինմանը (պլանային վիրահատություններ)

10.Տարեկան կանխարգելիչ բուժզննում

Տարեկան կանխարգելիչ բուժզննումն իրականացվում է Պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ Ապահովագրողի կողմից նշված բժշկական կենտրոններում՝

10.1 Բժիշկ-մասնագետների խորհրդատվություններ՝
- 10.1.1 Թերապևտ (մանկաբույժ)
- 10.1.2 Գինեկոլոգ կամ ուրոլոգ

10.2 Լաբորատոր հետազոտություններ՝
- 10.2.1 Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով
- 10.2.2 Մեզի ընդհանուր քննություն
- 10.2.3 Շաքարի որոշումն արյան մեջ

10.3 Գործիքային հետազոտություններ՝
- 10.3.1 Էլեկտրասրտագրություն
- 10.3.2 Որովայնի խոռոչի և փոքր կոնքի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն
- 10.3.3 Կրծքագեղձի և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն
- 10.3.4 Էխոսրտագրություն

11. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԻՑ

Պայմանագրով նախատեսված ապահովագրական ծածկույթից բացառություններ են կազմում և ենթակա չեն հատուցման ստորև թվարկված հիվանդությունները, դեպքերը, բժշկական օգնության տեսակները,

11.1 Առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, դրանց հայտնաբերման նպատակով կատարվող հետազոտությունները (սիֆիլիս, գոնորեա, խլամիդիոզ, տրիխոմոնիազ, գարդներելոզ, միկոպլազմոզ, ուրեոպլազմոզ, սեռական օրգանների սնկային ախտահարում (կանդիդոզ), ցիտոմեգալովիրուս, անալ, գենիտալ հերպես և այլն),

11.2 ՀՀ առողջապահության նախարարության կողմից չարտոնագրված դեղորայք,

11.3 Մաշկի, եղունգների, փափուկ հյուսվածքների սնկային ախտահարումներ, պսորիազ, էկզեմա,

11.4 Աուտոիմուն, շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ (համակար-գային կարմիր գայլախտ, ռևմատոիդ արթրիտ, արթրոզներ, դերմատոմիոզիտ, համակարգային վասկուլիտներ, հանգուցավոր պերիարտերիիտ, հեմոռագիկ վասկուլիտ), ամիլոիդոզ,

11.5 Տեսողության սրության վիրահատական շտկում,

11.6 Բնածին արատներ, զարգացման անատոմիական առանձնահատկություններ (բացառությամբ քթի միջնապատի դեֆորմացիան և դրա բարդությունները), ժառանգական հիվանդություններ (պարբերական հիվանդություն և այլն),

11.7 Շաքարային դիաբետ (I, II տիպ), այլ էնդոկրին հիվանդություններ, դրանց հետևանքները

11.8 Արյան արտաերիկամային մաքրում պահանջող հիվանդություններ, ներառյալ քրոնիկ երիկամային անբավարարություն,

11.9 Անպտղության (առաջնային, երկրորդային), սեռական դիսֆունկցիայի բուժում, հակաբեղմնավորման մեթոդներ, արհեստական բեղմնավորում, հղիության արհեստական ընդհատում (բացառությամբ բժշկական ցուցումներով հղիության արհեստական ընդհատման դեպքերի), սեռական հորմոնային դիսֆունկցիաներ (դիսմենորեա, հորմոնալ ոլորտի այլ շեղումներ)՝ դրանց ախտորոշումը, բուժումը, վերարտադրողական ոլորտի այլ շեղումները հայտնաբերող, շտկող միջոցառումներ,

11.10 Էպիլեպսիա, մանկական ուղեղային պարալիչ, քնի և շարժողական խանգարումներ,

11.11 Քաշի կարգավորում, խոսքի արատների շտկում,

11.12 Պալարախտ, պոլիոմիելիտ,

11.13 ՄԻԱՎ վարակ, հաստատված իմունանբավարարության վիճակներ, հեպատիտ B, C, D, դրանց հետևանքները, լյարդի ոչ վիրուսային ցիրոզներ,

11.14 Նյարդային, հոգեկան ոլորտի շեղումներ, սահմանային վիճակներ՝ նևրոզներ, կպչուն վիճակներ և այլն,

11.15 Պայմանագրում չնշված ֆիզիոթերապևտիկ միջոցառումներ, ոչ գիտական (ալտերնատիվ) ախտորոշիչ, բուժական մեթոդներ՝ հոմեոպաթիա, ֆիտոթերապիա, արոմաթերապիա, հիդրոթերապիա, ցեխաբուժություն, ակուպունկտուրա, բիոռեզոնանսային ախտորոշում, Ֆոլլի մեթոդով ախտորոշում, իրիդոդիագնոստիկա, մագնիտոթերապիա, էներգետիկ բժշկություն, սկենառ թերապիա, մանուալ թերապիա և այլն; կազդուրման ավանդական համակարգեր; փորձարարական, հետազոտական բնույթի բուժում; հեռաբժշկության հետ կապված ծառայություններ; բուժման էքստրակորպորալ մեթոդներ,

11.16 Կոսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն, ներառյալ պլաստիկ, վերականգնողական վիրաբուժություն (բացառությամբ այն դեպքերի, երբ նման բուժումը, վիրահատությունը պահանջվում է ապահովագրության գործողության ժամկետում տեղի ունեցած վնասվածքի արդյունքում),

11.17 Բժշկական, հարբժշկական սարքավորումներ, լսողական, տեսողական սարքեր, իմպլանտներ, ինչպես նաև այլ կարգավորիչ բժշկական հարմարանքներ ձեռք բերելու, դրանց հարմարեցման համար կատարված ծախսերը, պրոթեզներ, էնդոպրոթեզներ, բոլոր տեսակի պրոթեզավորումները, դրանց պատրաստումը, ձեռք բերումը, տեղադրումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման բուժումն անհրաժեշտ է Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած վնասվածքից հետո: Նշված կետից բացառություն են կազմում պայմանագրի ծածկույթով նախատեսված դեպքերը,

11.18 Բուժական սնունդ, սննդային, կենսաբանական ակտիվ հավելումներ (վիտամիններ և այլն), խնամքի պարագաներ, հանքային ջրեր,

11.19 Պրոֆիլակտիկ, կազդուրողական միջոցառումներ, իմունոպրոֆիլակտիկա, մարզասարքեր, արևաբուժարան, ջրային պրոցեդուրաներ, սանատոր կուրորտային բուժում և այլն,

11.20 Ապահովագրվածի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու, դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը, ինչպես նաև Ապահովագրված անձի ցանկությամբ, առանց բժշկի նշանակման իրականացված բուժման ծախսերը,

11.21 Ալկոհոլի, թմրանյութերի, թունավոր նյութերի և այլ հոգեմետ նյութերի օգտագործման հետևանքով առաջացած ծախսեր, ինչպես նաև Ապահովագրված անձի կողմից ալկոհոլային, թմրանյութեր, թունավոր նյութեր և այլ հոգեմետ նյութեր օգտագործած անձին տրանսպորտային միջոցի ղեկավարումը փոխանցելու հետևանքով,

11.22 Պայմանագրով չնախատեսված բժշկական, այլ ծառայություններ,

12. ՀԱՅՏԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

12.1 *Եթե անհրաժեշտ է բժշկական օգնություն*

Հարկավոր է զանգահարել ապահովագրական քարտի վրա նշված «Գարանտ Ասիստանս»-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)՝ 24/7/365 ռեժիմով աշխատող հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի հեռախոսահամարով՝ **055 003 003** կամ **060 65 65 65**:

Հեռախոսազանգերի շուրջօրյա սպասարկման կենտրոնի աշխատակիցները կպատասխանեն հայտերի կարգավորման հետ կապված բոլոր հարցերին.

- ✓ կօգնեն ընտրել բուժհաստատություն,
- ✓ կգրանցեն ընդունելության համապատասխան մասնագետի մոտ,
- ✓ կտրամադրեն տեղեկատվություն հատուցվող ծառայությունների վերաբերյալ,
- ✓ անհրաժեշտության դեպքում կապ կհաստատեն նաև Ընկերությունում աշխատող բժիշկ-փորձագետների հետ:

Շտապ կամ անհետաձգելի օգնության անհրաժեշտության դեպքում հարկավոր է զանգահարել ապահովագրական քարտի վրա նշված շտապ օգնության հեռախոսահամարներից որևէ մեկով, այնուհետև 24 ժամվա ընթացքում տեղեկացնել դեպքի մասին՝ զանգահարելով կոնտակտ կենտրոն:

Հայտը գրանցելուց հետո.

1. Ապահովագրված անձը կարող է սպասարկվել Ընկերության հետ համագործակցող բժշկական հիմնարկությունների ցանկում ընդգրկված հիմնարկությունում, որտեղ սպասարկումը կիրականացվի անվճար:

2. Ապահովագրված անձը կարող է սպասարկվել համագործակցող բժշկական հաստատությունների ցանկում չընդգրկված հաստատությունում, որի դեպքում հնարավոր են հետևյալ տարբերակները՝

ա)Ընկերությունը տվյալ բժշկական հաստատության մատուցված բժշկական ծառայությունների դիմաց գումարները փոխանցում է անմիջականորեն բժշկական հաստատության հաշվեհամարին՝ երկկողմանի ստորագրված և կնքված հաշիվ-ապրանքագրի հիման վրա, նախապես համաձայնեցված գնի սահմաններում,
բ)Ապահովագրված անձը կարող է սպասարկվել համագործակցող բժշկական հաստատությունների ցանկում չընդգրկված հաստատությունում, որի դեպքում վճարումներն իրականացնում է ինքնուրույն և այնուհետև սահմանված կարգով ներկայացնում է բուժօգնությունը հիմնավորող վճարային և բժշկական փաստաթղթերը: Ընդ որում, հատուցման ենթակա գումարը չի կարող գերազանցել բժշկական հաստատությունների ցանկում նշված առաջին 10 (տասը) Բժշկական հաստատությունների և Ապահովագրողի միջև կնքված համագործակցության պայմանագրերի համաձայն տվյալ ծառայության գծով գործող գների հիման վրա հաշվարկված միջին մեծությունը:

12.2 Հայտը կարգավորելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

12.2.1 Հայտային դիմում, որը լրացվում է հայտատուի կամ նրա օրինական ներկայացուցչի (եթե Ապահովագրված անձն անչափահաս է), ամուսնու/կնոջ կողմից

12.2.2 Բժշկական փաստաթղթեր[1]

Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության դեպքում

12.2.2.1*Բժշկական տեղեկանք**, որտեղ պետք է նշված լինի՝

- ✓ Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
- ✓ Ապահովագրված անձի՝ դիմելու ամսաթիվը,
- ✓ Կատարված և/կամ նշանակված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները,
- ✓ Վերջնական ախտորոշումը,
- ✓ Նշանակված բուժումը (դեղերի ցանկը ներառյալ՝ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը):

(*Տեղեկանքը պետք է լրացված լինի բժշկի կամ բուժհաստատության բլանկի վրա և ստորագրված լինի բուժող բժշկի կողմից:)

12.2.2.2 *Կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխաններ*:

Ստացիոնար բուժման դեպքում

12.2.2.3Էպիկրիզ* (քաղվածք հիվանդության պատմությունից), որտեղ պետք է նշված լինի

- ✓ Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
- ✓ Ապահովագրված անձի՝ դիմելու և դուրսգրման ամսաթիվը,

[1]Բժշկական փաստաթղթերը ներկայացվում են այն դեպքերում, երբ Ապահովագրված անձը դիմում է բժշկական հիմնարկություն, որը ներառված չէ Ապահովագրողի կողմից ներկայացված բժշկական հիմնարկությունների ցանկում

- ✓ Կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները,
- ✓ Վերջնական ախտորոշումը,
- ✓ Նշանակված բուժումը (դեղերի ցանկը ներառյալ՝ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը)

(*Էպիկրիզը պետք է ստորագրված լինի բուժող բժշկի կողմից և կնքված լինի բժշկական հաստատության կնիքով):

12.2.2.4Կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխաններ:

12.2.3.Ֆինանսական փաստաթղթեր[2]

Եվ ամբուլատոր-պոլիկլինիկական, և ստացիոնար բուժման դեպքում

- ✓ Դեղերի գնման դեպքում ՀԴՄ կտրոն և բացվածք (տրամադրված դեղորայքի անվանացանկ),
- ✓ ՀԴՄ կտրոն, ԴՄՕԱ կամ հաշիվ-ապրանքագիր (վերջիններում պետք է նշված լինի մատուցված բժշկական ծառայության տեսակը, սակագինը, վճարված գումարի չափը, վճարման ամսաթիվը, հաստատված լինի բուժհաստատության կնիքով):

12.2.4Անձը հաստատող փաստաթղթեր

- ✓ Անձնագիր կամ նույնականացման քարտ (ներկայացնում են այն դեպքում, եթե Ապահովագրված անձը հատուցումը ստանալու է կանխիկ Ընկերության գրասենյակից)
- ✓ Ծննդյան վկայականի պատճեն (եթե ապահովագրված անձն անչափահաս է, փաստաթղթերը ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը՝ հայր/մայր/այլ)
- ✓ Ապահովագրական քարտ

12.2.5 Համագործակցող դեղատների ցանցից նշանակված դեղամիջոցները ձեռք բերելու ընթացակարգը

Ապահովագրված անձը պետք է բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսը ներկայացնի Ընկերության գրասենյակ, որտեղ վերոնշյալ դեղատոմսի հիման վրա նրան կտրամադրեն Ապահովագրողի կողմից հաստատված նմուշի «Նշանակման թերթիկ»: Վերջինս ապահովագրական քարտի և անձնագրի հետ միասին դեղատների ցանցի որևէ դեղատանը ներկայացնելու դեպքում Ապահովագրված անձը անվճար կստանա դեղատոմսում նշված դեղամիջոցները:

Փաստաթղթերը, այդ թվում՝ հայտային դիմումը, կարելի է ներկայացնել Ընկերության գրասենյակ ցանկացած աշխատանքային օր հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- ✓ Առձեռն (ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 30, մինչև ժամը 16 :00)
- ✓ Էլ. փոստով* (info@gassistance.am)

(*Փաստաթղթերի ներկայացման այս տարբերակն ազատում է Ապահովագրված անձին, նրա ամուսնուն/կնոջը կամ օրինական ներկայացուցչին ևս մեկ անգամ Ընկերության գրասենյակ այցելելու պարտականությունից):

[2]Ֆինանսական փաստաթղթերը ներկայացվում են այն դեպքերում, երբ Ապահովագրված անձը դիմում է բժշկական հիմնարկություն, որը ներառված չէ Ապահովագրողի կողմից ներկայացված բժշկական հիմնարկությունների ցանկում

Էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով ուղարկված բոլոր փաստաթղթերի բնօրինակները պետք է ներկայացվեն «Գարանտ Ասիստանս»-ի գրասենյակ հայտը ներկայացնելու օրվանից 10 օրվա ընթացքում:

<u>Ուշադրություն՝</u> Ապահովադրի/Ապահովագրված անձի կողմից ապահովագրական պատահարը և բժշկական ծախսերը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն Ընկերությանը բժշկական ծախսերը կատարելուց հետո առավելագույնը **45 օրվա ընթացքում**: Ապահովագրված անձի կողմից ինքնուրույն բժշկական ծախս կատարելու դեպքում ապահովագրական հատուցումը կարող է իրականացվել անկախիկ:
Հայտի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը կայացնում է որոշում պատահարն ապահովագրական ճանաչելու և ապահովագրական հատուցման վճարումը մասամբ/ամբողջությամբ իրականացնելու կամ մերժելու վերաբերյալ: Հատուցման վճարումն իրականացվում է ապահովագրական հատուցումը վճարելու վերաբերյալ որոշման ընդունման պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Հավելված 3
Կամավոր բժշկական ապահովագրության
թիվ HI018072 պայմանագրի

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵՐԵՎԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ	ՀԱՍՑԵ
«Արաբկիր» Բժշկական Համալիր - երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ	Մամիկոնյանց փող., 30 շենք
«Իզմիրլյան» Բժշկական Կենտրոն	Ավետիս Ահարոնյանի փող. 6 շենք
«Էլիտ Մեդ» Բժշկական կենտրոն	Հակոբ Հակոբյան փող., 3/15 շենք
«Նորք-Մարաշ» Բժշկական Կենտրոն	Արմենակ Արմենակյան, 13 շենք
«Հերացի» №1 Հիվանդանոցային Համալիր (Երևանի Մխիթար Հերացու Անվան Պետական Բժշկական Համալսարանի)և «Մուրացան» Հիվանդանոցային Համալիր	Աբովյան փող., 58 շենք/Մուրացանի փող., 114 շենք
«Քանաքեռ-Զեյթուն» Բժշկական Կենտրոն	Ներսիսյանի փող. 7 շենք
«ՆյուՄեդ» Ուրոլոգիայի Կենտրոն» ՓԲԸ	Աբովյան փող. 54 շենք
«Հայ-Ամերիկյան Առողջության Կենտրոն» Հիմնադրամ	Մխիթար Հերացու 5
«Աջափնյակ» ԲԿ	Աբելյան փող. 8/1 շենք
Դիալաբ ԲԿ և կլինիկական ախտորոշիչ լաբորատորիա	Մամիկոնյանց փող., 41 շենք
«Աստղիկ» Բժշկական Կենտրոն	Դանիել Վարուժանի փող., 28ա շենք
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» Բժշկական Կենտրոն	Գյուրջյան փող. 10 շենք
«Արբես» Առողջության կենտրոն	Վահրամ Փափազյան փող., 32 շենք
«Նորք Ինֆեկցիոն» Հիվանդանոց	Ա. Արմենակյանի փող. 153 շենք
«Էրեբունի» Բժշկական Կենտրոն-(բացառությամբ մանկաբարձ-գինեկոլոգիական ծառայության)	Տիտոգրադյան փող., 14 շենք
«Նաիրի» Բժշկական Կենտրոն	Պարոնյան 21
Վնասվածքաբանության, օրթոպեդիայի և վերականգնողական կենտրոն	Նորք, 9-րդ փող. 123 շենք
Վ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանական կենտրոն	Ֆանարջյան 76
«Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	Պարույր Սևակի փող. 5 շենք
«Արմենիա» Հանրապետական Բժշկական Կենտրոն	Մարգարյան փող., 6 շենք
Պերինտոլոգիայի, Մանկաբարձության և Գինեկոլոգիայի կենտրոն	Մարգարյան փող., 6 շենք
Պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն	Ներսիսյանի փող. 7 շենք
Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀԻ	Մ. Մաշտոցի պողոտա 22 շենք

«Սուրբ Աստվածամայր» Բժշկական Կենտրոն	Արտաշիսյան փող., 46/1 շենք
Ուլտրաիմիջինգ ռադիոլոգիայի գիտամեթոդական կենտրոն	Պարույր Սևակի փող., 5/7 շենք
«ՄԻԲՍ» ԲԿ	Բագրատունյաց փող. 1 շենք
«Սանիտա» ԲԿ	Բագրատունյաց փող. 2-րդ նրբ., 23 շենք
«Աքսիոմեդ» Բժշկական կենտրոն	Տերյան 3 շենք, 42 տարածք
«Տանիելյան կենտրոն» ԲԿ	Սայաթ-Նովայի պող., 21ա շենք
Թիվ 2 բուժմիավորում	Արամի փող. 47
Վարդանանց ՆԲԿ	Վարդանանց փող. 18/1 շենք
«Էկոսենս» լաբորատորիա	Կոմիտասի պող., 37/1 շենք
«Դավիդյանց» լաբորատորիաններ	Արամի փող. 54
«ՀՀ Օպտոմեդ Կանադա» մ-ղ	Ալեք Մանուկյան փող., 9 շենք, սեն. 102, 202
«Մայր Օպտիկա»	Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 3/76 շենք
Սրուրեան» Ակնաբուժական Կենտրոն	Տերյան փող., 105/1 շենք, 2-րդ հարկ
«Լավանդա-Նորֆարմ» ՍՊԸ	Տիգրան Մեծի պող., 17 շենք
«Կարդիոլայֆ» ԲԿ	Հրաչյա Քոչարի փող. 1
Ատամնաբուժական կենտրոններ	**Հասցե**
Արաբկիր բժշկական համալիրի ատամնաբուժական ծառայություն	Մամիկոնյանց փող., 30 շենք
«Վան» Ատամնաբուժական Կենտրոն	Թումանյան փող., 23 շենք
«Դելյուքս» Ատամնաբուժական Կենտրոն	Կորյունի փող. 1 շենք
«Դենտեքս Դենտալ Գրուպ» Ատամնաբուժական Կենտրոն	Հանրապետության փող., 62 շենք, տարածք 150 (մուտքը Վարդանանց փող. կողմից)
«Նորադենտ» Ատամնաբուժական Կենտրոն	Էրեբունի փող. 23 շենք
«Գոյդենտ» Ատամնաբուժական Կենտրոն	Նոր Նորքի 1-ին միկրոշրջան, Լվովյան փող., 5 շենք
«Բիանկոդենտ» Ատամնաբուժական Կենտրոն	Կոմիտասի պող., 49/12 շենք
«Արսեդենտ» Ատամնաբուժական Կենտրոն	Աբովյան փող., 54 շենք
«Վելլմեդ» ատամնաբուժական կլինիկա	Բագրատունյանց 12 շենք
Համալսարանական Ստոմատոլոգիական №1 Պոլիկլինիկա	Աբովյան փող., 58 շենք
Համալսարանական Ստոմատոլոգիական №2 Պոլիկլինիկա	Մամիկոնյանց փող., 30 շենք
Համալսարանական Ստոմատոլոգիական №3 Պոլիկլինիկա	Կորյունի փող., 2 շենք
«Ա ստոմ» Ատամնաբուժական Կենտրոն	Կոմիտասի պող., 26 շենք
«Մեդեսի» Ատամնաբուժական Կենտրոն	Դավթաշեն, 3-րդ թաղամաս, 5/1 շենք
«Ագաթ Դենթլ Ատամնաբուժական Կենտրոն	Բաղրամյան 33ա, բն. 29

«Լիգադենտ» ստոմատոլոգիական կենտրոն	Ավան, Սայաթ-Նովայի թաղամաս, 8 շենք
«Կլանսե» Ատամնաբուժական Կենտրոն	Նանսենի 3 փող., 7 շենք
«Շամս Ատամնաբուժական Կենտրոն	Բաբայան փող., 12 շենք
«Առիգ-Մեդ» Բժշկական կենտրոն	Բարձրաբերդի փող., 7/7 շենք
ԴԵՂԱՏՆԵՐԻ ՑԱՆՑ	
«Գեդեոն Ռիխտեր» Դեղատների Ցանց	
«Կառէ» ՍՊԸ	
«Բեյբի-Լենդ» ՍՊԸ	
«Էմիլի Ֆարմ» ՍՊԸ	
«Լառաֆարմ»ՍՊԸ	
«Ավրորա-ֆարմ»ՍՊԸ	
«Առիալ»ՍՊԸ	

ՀՀ ՄԱՐԶԵՐ

Շիրակ	
Գյումրու Բժշկական Կենտրոն	ք.Գյումրի, Գարեգին Նժդեհի փող., 3/3 շենք
Բեռլին պոլիկնինիկա	ք.Գյումրի, Հաղթանակի պող., 25 շենք
«ՄՌՏ Էքսպերտ Անդրկովկաս»	ք.Գյումրի Գարեգին Նժդեհ 3/3
Լոռի	
Վանաձորի բժշկական համալիր	ք. Վանաձոր, Բանակի 8
Սպիտակի Բժշկական Կենտրոն	ք. Սպիտակ, Երեւանյան խճ. 1
Ստեփանավանի Բժշկական Կենտրոն	ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 1
Ալավերդու Բժշկական Կենտրոն	ք. Ալավերդի, Սայաթ-Նովայի փող., 20 շենք
«Ժպիտ» ստոմատոլոգիական Կլինիկա	ք.Վանաձոր, Գրիգոր Լուսավորչի փող., 54ա/1 շենք
Տավուշ	
Իջևանի Բժշկական կենտրոն	ք. Իջևան, Նալբանդյան 1
«Իռ-Վինգ» Բժշկական Կենտրոն	ք.Դիլիջան, Գորկու փող. շենք 90
Բերդի Բժշկական Կենտրոն	ք.Բերդ, Ալեք Մանուկյան փող., 25 շենք
Նոյեմբերյանի Բժշկական Կենտրոն	ք.Նոյեմբերյան,Գարեգին Նժդեհի փող., 15 շենք
Արագածոտն	
Ապարանի Բժշկական Կենտրոն	ք.Ապարան, Գարեգին Նժդեհի փող. 21 շենք
Աշտարակի Բժշկական Կենտրոն	ք.Աշտարակ, Նարեկացու փող., 61 շենք
Թալինի Բժշկական Կենտրոն	ք.Թալին, Քոթանյան փող., 10 շենք
Արմավիր	

Վաղարշապատի Բժշկական Կենտրոն	ք.Էջմիածին,Սպանդարյան 1
«Մաստեր Ֆարմ» ԲԿ	ք.Էջմիածին,Սպանդարյան 1
Կոտայք	
Հրազդանի Բժշկական Կենտրոն	ք. Հրազդան, Պուրակային փող. 32 շենք
Աբովյանի Բժշկական Կենտրոն	ք.Աբովյան,Հատիսի փող., 6 շենք
Չարենցավանի Բժշկական Կենտրոն	ք.Չարենցավան, Երիտասարդության փող., 8 շենք
Գեղարքունիք	
Սևանի Բժշկական Կենտրոն	ք.Սևան, Նաիրյան փող., 169 շենք
Գավառի Բժշկական Կենտրոն	ք.Գավառ, Ազատության փող., 21 շենք
Մարտունու Բժշկական Կենտրոն	ք. Մարտունի, Գետափնյա փող., 2/17 շենք
Արարատ	
Արտաշատի Բժշկական Կենտրոն	ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 116
Արարատի Բժշկական Կենտրոն	ք. Արարատ, Խանջյան փող., 59 շենք
Մասիսի Բժշկական Կենտրոն	ք. Մասիս, Մխիթար Հերացու փող., 1 շենք
Վեդու Բժշկական Կենտրոն	ք. Վեդի Գայի փող., 2 շենք
«Արտաշատի Ստոմատոլոգ» ՓԲԸ	ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փող., 42 շենք
Վայոց Ձորի մարզ	
Եղեգնաձորի Բժշկական Կենտրոն	ք.Եղեգնաձոր, Վայքի փող., 1 շենք
Վայքի Բժշկական Կենտրոն	ք.Վայք, Շահումյան փող., 91 շենք
Սյունիքի մարզ	
Կապանի Բժշկական Կենտրոն	ք. Կապան, Մելիք-Ստեփանյան փող., 13 շենք
Գորիսի Բժշկական Կենտրոն	ք. Գորիս, Գրիգոր Տաթևացու փող., 31 շենք
Սիսիանի Բժշկական Կենտրոն	ք.Սիսիան, Չարենցի փող., 14 շենք
Մեղրիի Բժշկական Կենտրոն	ք.Մեղրի, Գործարարների փող., 42 շենք
Արցախ	
ԱՆ «Հանրապետական բժշկական կենտրոն»	ք. Ստեփանակերտ, Բաղրամյան 9
«Վիտամեդ պլյուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ, Բաղրամյան 7/1
«Դենտեքս Դենտալ Գրուպ» ՍՊԸ Արցախի մ/ճ	ք. Ստեփանակերտ, Ալեք Մանուկյան փող.շենք 9ա

Ապահովագրված անձն իրավունք ունի սպասարկվելու Հայաստանի Հանրապետության տարածքում գործող լիցենզավորված ցանկացած բժշկական հաստատությունում:

<u>Ուշադրություն՝</u>

- Պայմանագրի գործողության ընթացքում Համագործակցող բժշկական հաստատությունների ցանկը կարող է փոփոխվել,

- Ապահովագրված անձը կարող է սպասարկվել համագործակցող բժշկական հաստատությունների ցանկում չընդգրկված հաստատությունում, որի դեպքում վճարումներն իրականացնում է ինքնուրույն և այնուհետև սահմանված կարգով ներկայացնում է բուժօգնությունը հիմնավորող վճարային և բժշկական փաստաթղթերը: Ընդ որում, հատուցման ենթակա գումարը չի կարող գերազանցել բժշկական հաստատությունների ցանկում նշված առաջին 10 (տասը) Բժշկական հաստատությունների և Ապահովագրողի միջև կնքված համագործակցության պայմանագրերի համաձայն տվյալ ծառայության գծով գործող գների հիման վրա հաշվարկված միջին մեծությունը:

Հավելված 5
Կամավոր բժշկական ապահովագրության
Թիվ HI018072 պայմանագրի

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆԱՑՎԱԾ ԳՆԱՑՈՒՑԱԿ

No.	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հատուցման սահմանաչափ (ՀՀ դրամ)
1.	Ատամի կարիեսի բուժում (լուսակարծրացող պլոմբանյութով)	11,000
2.	Պուլպիտի բուժում (մեկ արմատախողովակ, լուսակարծրացող պլոմբանյութով)	12,500
3.	Պուլպիտի բուժում (երկու արմատախողովակ, լուսակարծրացող պլոմբանյութով)	13,500
4.	Պուլպիտի բուժում (երեք և ավելի արմատախողովակ, լուսակարծրացող պլոմբանյութով)	14,000
5.	Պերիոդոնտիտի բուժում (մեկ արմատախողովակ, լուսակարծրացող պլոմբանյութով)	13,500
6.	Պերիոդոնտիտի բուժում (երկու արմատախողովակ, լուսակարծրացող պլոմբանյութով)	14,500
7.	Պերիոդոնտիտի բուժում (երեք և ավելի արմատախողովակ,լուսակարծրացող պլոմբանյութով)	16,000
8.	Ատամի հեռացում (պարզ)	3,000
9.	Ատամի հեռացում (բարդ)	5,000-7,000
10.	Ատամնաքարերի հեռացում և փայլեցում	15,000
11.	Ռենտգեն	1,000